ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.12.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
ՍՑ-30/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.08.2015թ. թիվ 1/73-1/21459-15 և 18.08.2015թ. թիվ 1/73-1/22117-15 գրություններով ներկայացված «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03804898) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-30/15 բողոք), ինչպես նաև ՍՑ-ԳԲԽ-30/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 07.12.2015թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) 12.08.2015թ. թիվ 1/73-1/21459-15 և 18.08.2015թ. թիվ 1/73-1/22117-15 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

Վերոհիշյալ գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 07.08.2015թ. թիվ 13-01/1152 և «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի 14.08.2015թ. թիվ Ե-4563 գրությունների և կից փաստաթղթերի պատճենները:

2. «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 18.08.2015թ. թիվ 01/04.1/2184-15 և 01.09.2015թ. թիվ 01/04.1/2276-15 գրություններով դիմել է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին:

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն 11.09.2015թ. թիվ 51 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերության աշխատակցի չիմացության պատճառով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու պահի դրությամբ ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ և թյուրիմացաբար մասնակցել է հանդերձանքի գնման նպատակով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից կազմակերպված ընթացակարգերին:

Ընկերությունը խնդրել է ընդառաջել, քանի որ նախկինում նմանատիպ բացթողում տեղի չի ունեցել:

3. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 07.08.2015թ. թիվ 13-01/11152 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի

կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-15/30» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 04.08.2015թ. հայտ է ներկայացրել նաև «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն և վերջինս ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 29 597 676 ՀՀ դրամի չափով:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն 23.10.2015թ. թիվ 13-01/1567 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-15/30» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

4. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 14.08.2015թ. թիվ Ե-4563 գրությամբ ներկայացրել է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/10-02» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները և հայտնել է, որ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/10-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 03.08.2015թ. հայտ է ներկայացրել նաև «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն և վերջինս ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 29 555 542 ՀՀ դրամի չափով:

5. ՍՑ-ԳԲԽ-30/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 07.12.2015թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 12.08.2015թ. թիվ 1/73-1/21459-15 և 18.08.2015թ. թիվ 1/73-1/22117-15 գրություններով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03804898) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու

պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

6. ՍՑ-ԳԲԽ-30/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 12.08.2015թ. թիվ 1/73-1/21459-15 և 18.08.2015թ. թիվ 1/73-1/22117-15 գրություններով ներկայացված «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/10-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն:

- Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (03.08.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:
- Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 07.08.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 2015թ. օգոստոսի 3-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ)

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

• Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն 2015թ. օգոստոսի 3-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 29 555 542 ՀՀ դրամի չափով:

2. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-15/30» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն:

• Ընկերությունը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (04.08.2015թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

• Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 04.08.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 2015թ. օգոստոսի 4-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ:

• Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.08.2015թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն 2015թ. օգոստոսի 4-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 29 597 676 ՀՀ դրամի չափով:

• Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.08.2015թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1-ին կետով որոշել է «Մասիսի Գարուն կարի

ֆաբրիկա» ՍՊԸ-ի գնման գործընթացին ներկայացրած ֆինանսական միջոցների մասին հայտարարությունը որակել իրականության չհամապատասխանող, քանի որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ:

7. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-30/15 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

Խորհուրդը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.08.2015թ. թիվ 1/73-1/21459-15 և 18.08.2015թ. թիվ 1/73-1/22117-15 գրությունները, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի 11.09.2015թ. թիվ 51 գրությունը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն 23.10.2015թ. թիվ 13-01/1567 գրությունը և կից փաստաթղթերը, «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 14.08.2015թ. թիվ Ե-4563 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Կարգի 125-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Այսպիսով, Խորհուրդը արձանագրում է, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/10-02» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 03.08.2015թ., ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 29 555 542 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-15/30» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 04.08.2015թ., ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 29 597 676 ՀՀ դրամի չափով, ինչի պայմաններում Ընկերությունը, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն, իրավունք չուներ մասնակցելու գնումների ընթացակարգերին:

Մինչդեռ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/10-02» և «ԲԷՑ-ՇՀԱՊՁԲ-15/30» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին մասնակցելու նպատակով 03.08.2015թ. և 04.08.2015թ. ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ վերը նշված ընթացակարգերին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ (03.08.2015թ. և 04.08.2015թ.) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, ինչը հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու պայմաններում Ընկերության կողմից հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 12.08.2015թ. թիվ 1/73-1/21459-15 և 18.08.2015թ. թիվ 1/73-1/22117-15 գրություններով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03804898) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Լուսինե Ոսկանյան**

Անդամ՝ **Գևորգ Հայրապետյան**